Հավելված
Արենի համայնքի ավագանու 19.04.2019թ.
N 6 արտահերթ նիստի N34 որոշման

# Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

## Համայնքի տեսլականը՝

*Արենին զարգացած գյուղատնտեսությամբ, փոքր և միջին ձեռնարկատիրությամբ բարեկարգ բազմաբնակավայր համայնք է, որտեղ ապահովված է բնակիչների զբաղվածությունը և բարեկեցիկ կյանքը: Համայնքը հայկական գինեգործության ավանդույթները ներկայացնող հայտնի զբոսաշրջության կենտրոն է:*

**Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները**

| Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
|---|---|---|
| Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%) | 15 | 10 |
| Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%) | 51 | 55 |
| Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ) | 11442 | 11550 |
| Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ) | 45.000000 | X |
| Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ) | 15/72աշխատատեղ | 18/104 |

**Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները .**

| Ոլորտային նպատակ | Վերջնական արդյունքի | | |
|---|---|---|---|
| | Ցուցանիշ | Ելակետային արժեք | Թիրախային արժեք |
| **Ոլորտ 1. Ընդհանուր:**<br>• Ապահովել տեղական ինքնակառավարումը Արենի բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ<br>• Կազմակերպել համայնքային գույքի կառավարումը, նպատակային օգտագործումը | • ՏԻ մարմինների կողմից ընդունված որոշումների հասանելիությունը բնակիչներին % | **90** | **100** |
| | • Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում % | 51 | **55** |
| | • Համայնքային գույքի կառավարումից առաջացած եկամուտների տեսակարար կշիռը սեփական եկամուտների կազմում % | 13.9 | 20 |
| **Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն:**<br>• Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և | Աղբահանության ծառայությունից օգտվող բնակավայրերի տեսակարար կշիռը ընդհանուրի կազմում % | **88.8** | 100 |

| | | | |
|---|---|---|---|
| ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը<br><br>• Գույքի և տեխնիկայի ձեռք բերում,տեխնոպարկի ստեղծում | Լուսավորության և ջրամատակարարման համակարգերում խափանումների թվի նվազեցում %<br><br>Համայնքի գույքի համալրվածության ապահովում,մատուցվող ծառայությունների որակի բարձրացում | 30<br>**20** | 80<br>**60** |
| **Ոլորտ 3. Կրթություն:**<br>Կազմակերպել նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայություններ | Նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության հասանելիությունը նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում - %<br>Արտադպրոցական կրթության ծառայությունից օգտվող բնակավայրերի տեսակարար կշիռը ընդհանուր բնակավայրերի մեջ % | **41** | **65** |
| **Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ:**<br>Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը | Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը % | 35 | 80 |
| **Ոլորտ 5. Գյուղատնտեսություն:**<br>Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը | Պետական և մասնավոր հատվածի ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր ներդրումների ծավալում % | 15 | **20** |
| **Ոլորտ 6. Տրանսպորտ:**<br>Ապահովել համայնքային ճանապարհների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը. | Համայնքի տարածքում գտնվող կամուրջների շահագործման անվտանգության մակարդակը-% | 85 | 100 |
| **Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն:**<br>Աջակցել համայնքի կարիքավոր ընտանիքներին | Համայնքի կողմից սոցիալական աջակցություն ստացող ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, % | 32 | **60** |
| **Ոլորտ 8. Զբոսաշրջություն**<br>Խթանել համայնքում զբոսաշրջության զարգացումը: | Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը նախորդ տարվա համեմատ - % | 12 | 20 |

Աշխատակազմի քարտուղար Գ.Սիմոնյան